

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 մայիսի 2006 թվականի N 731-Ն

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ  
ՆԿԱՏԱՍԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2006 թ. հունիսի 1  
Երևան

## Կ Ա Ր Գ

### ՊԵՏԱԿԱՆ ԿԱՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է պետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պետության կամ համայնքի սեփականությունը հանդիսացող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համապատասխան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը:

2. Համայնքների ղեկավարները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդունում են սույն կարգի 1-ին կետով նախատեսված ինքնակամ կառույցների մասին որոշում, որով ինքնակամ կառույցները համարվում են պետական կամ համայնքային սեփականություն: Նշված որոշմանը կցվում են հողամասի և շինությունների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հրամանով հաստատված ձևի հատակագծերը:

Հավելված  
ՀՀ կառավարության 2006 թվականի  
մայիսի 18-ի N 731-Ն որոշման

*(2-րդ կետը փոփ. 30.04.09 N 462-Ն, 14.07.11 N 981-Ն, իսմբ. 26.01.12 N 131-Ն)*

3. Սույն կարգով սահմանված որոշումն ընդունած լիազոր մարմինը՝ դիմումի հետ միասին, պետական գրանցում իրականացնող մարմնի՝ գույքի գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանում է ներկայացնում սույն կարգի 2-րդ կետում նշված որոշումը՝ կից հատակագծով՝ օրենքով սահմանված կարգով իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**